## Ջեռուցման համակարգի աշխատանքային գծագրերի հիմնական լրակազմի ամփոփագիր

| Թերթ | Անվանում | Ծանոթագր. |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր տվյալներ | Ջ-1 |
| 2 | Առաջին հարկի հատակագիծ ջեռուցման համակարգի անցկացումով Մ 1:100 | Ջ-2 |
| 3 | Երկրորդ հարկի հատակագիծ ջեռուցման համակարգի անցկացումով Մ 1:100 | Ջ-3 |
| 4 | Առաջին հարկի ջեռուցման համակարգի սխեմա | Ջ-4 |
| 5 | Երկրորդ հարկի ջեռուցման համակարգի սխեմա | Ջ-5 |
| 6 | Ջեռուցման համակարգի մասնագիր | Ջ-6 |

### Պայմանական նշաններ

| | |
|---|---|
| | Ջեռուցման մատակարարող խողովակագիծ |
| | Ջեռուցման հետադարձ խողովակագիծ |
| | Փական |
| | Դատարկման փական |
| d=20x2.8 | Խողովակի տրամագիծ |
| | Ջեռուցման տուրբո կաթսա |
| 50×50 | Ջեռուցման պողպատե պանելային մարտկոց 50սմ×50սմ չափերով (հատակագծում) |
| 50×50 | Ջեռուցման պողպատե պանելային մարտկոց կարգավորիչ փականով և օդահան կափույրով 50սմ×50սմ չափերով (սխեմայում) |
| Կ.1 | Ջեռուցման կանգնակ № 1 |
| | Անցում հատակի նախաշերտի միջով |

### Ընդհանուր ցուցումներ

Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղի մանկապարտեզի նախագիծն իրականացված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նախագծման նորմերին և կանոններին (ՀՀՇՆ IV-12.02.01-04), ինչպես նաև նախագծային առաջադրանքին համապատասխան:

Նախագիծն իրականացված է ըստ արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանի տարվա ցուրտ շրջանի համար $t_h$ = - 17°C:

Ջերմային դիմադրությունը պատերի համար ստացվում է $R_o$=2.36մ²°C/Վտ, իսկ առաստաղի համար՝ $R_o$=3.42 մ²°C/Վտ:

### Ջեռուցում

1. Մանկապարտեզի համար նախագծվում է փակուղային ջեռուցման համակարգ: Մայրուղային խողովակագծերն անց են կացվում առաջին և երկրորդ հարկերի հատակների վրայով:
2. Ջեռուցման ընդհանուր ծախսը կազմում է 55.3կՎտ (47560կկալ/ժամ):
3. Նախագծով նախատեսվում է ջերմային հանգույցում տեղադրել 2 տուրբո կաթսա՝ յուրաքանչյուրը 32կՎտ հզորությամբ:
4. Որպես ջերմատար ծառայում է 80-60 °C ջերմաստիճանով տաք ջուրը:
5. Որպես ջեռուցման սարքեր ընդունված են պողպատե պանելային մարտկոցներ, որոնց համապատասխան կախիչները, պտուտակամեխերը, փակիչը և օդահան կափույրը ներառված են յորաքանչյուր կոմպլեկտում:
6. Ջեռուցման համակարգում բոլոր խողովակները նախատեսվում են պոլիպրոպիլենային:
7. Համակարգից օդի հեռացումն իրականացվում է ջեռուցման մարտկոցների վրա տեղադրված օդահան կափույրների միջոցով:
8. Որպես ելակետային ջուր օգտագործվում է խմելու ջուրը շենքի ներքին ջրամատակարարման ցանցից:
9. Ջրի հեռացումը համակարգից իրականացվում է դատարկման փականների միջոցով դեպի հոսակ:
10. Հատակի նախաշերտի միջով անցնող խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով:
11. Մայրուղային խողովակագծերը ծածկվում են փայտատաշեղային լամինացված սալերով:
12. Շահագործումից առաջ ջեռուցման համակարգը ենթարկվում է հիդրավլիկ փորձարկման:
13. Թողարկումից հետո կատարվում է ջեռուցման համակարգի կարգաբերում:

| Ծրագրի առաջադրանք՝ ՏՄԱԳՄ-01 | | | | Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղի մանկապարտեզի կառուցման նախագծի տեղակապում | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ջեռուցում | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | | ԱՆ | Ջ-1 | 6 |
| | | | | Ընդհանուր տվյալներ | INTER energia ԻՆՏԵՐ էներգիա ՍՊԸ | | |
| Նախագծ. | Ա. Թորոսյան | | | | | | |
| Պաշտոն | Ազգանուն | Ստորագր. | | | | | |